# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄԱՔ-ՀՄԱ-ԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի բացման նիստի

ք. Արթիկ 06.05.2019թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Հ.Կարախանյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Ա.Աջամօղլյան, Ա.Տոնոյան, Հ.Սուջյան, Գ.Փթուկյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Ա.Ռափյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հրատապ մեկ անձից գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

1. Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|
| 1 | <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ | mgdesign19@gmail.com |
| 2 | <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ >> ՍՊԸ | globalengineerllc@gmail.com |
| 3 | «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ | pogosoval@mail.ru |
| 4 | «Տեխպրոեկտ» ՍՊԸ | ggulanyan@mail.ru |

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել ենհետևյալ մասնակիցները՝ «Տեխպրոեկտ» ՍՊԸ, <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ, «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ, կազմակերպությունները:

<<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ >> ՍՊԸ-ի կոմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր կազմել և ներկայացրել են բոլոր մասնակիցները:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

1.Ընդունել ի գիտություն, որ.

Գնման առարկա է հանդիսանում Արթիկ համայնքում լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը:

Գնման առարկան խմբավորված է երկու չափաբաժիններում:

1 չ/բ՝ **Արթիկ համայնքում իրականացվելիք մի շարք փողոցների լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություն:**

Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 1500000/մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2 **Արթիկ համայնքում իրականացվելիք մի շարք փողոցների լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն:**

Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 700000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Պայմանագիրը կատարելու համար մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Մասնակիցներ | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գինը | | |
|---|---|---|---|---|
| | | ՀՀ դրամ | | |
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
| Արթիկ համայնքում իրականացվելիք մի շարք փողոցների լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություն | <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ | 1350000 | 0 | 1350000 |
| | <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ >> ՍՊԸ | 3630000 | 0 | 3630000 |
| | «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ | 985000 | 0 | 985000 |
| Արթիկ համայնքում իրականացվելիք մի շարք փողոցների լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | «Տեխպրոեկտ» ՍՊԸ | 685000 | 0 | 685000 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան տառային և թվային տարբերակների միջև անհամապատասխանություններ:

Առաջին չափաբաժնի մասով <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է տվյալ գնման առարկայի ձեռքբերման համար գնումների պլանով նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի գնահատող հանձնաժողովը կայացրեց որոշում՝ առաջին չ/բ մասով մերժել <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

**1.** Առաջին Չ/բ մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ մասնակցին, իսկ երկրորդ Չ/բ մասով՝ «Տեխպրոեկտ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

**2.** Առաջին Չ/բ մասով որպես երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ին:

**3.** Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին և երկրորդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(զեկուցող՝ Հ.Կարախանյան )

Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության ստացման հաջորդող օրը, ժամը 14:00-ին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | _____ | Հ.Կարախանյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | _____ | Ա.Աջամօղլյան |
| | _____ | Ա.Տոնոյան |
| | _____ | Գ.Փթուկյան |
| | _____ | Հ.Սուջյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | _____ | Ա.Ռափյան |